ՀՄԿ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Շիրակի մարզի «Մուսայելյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց պատմություն

ԹԵՄԱ՝ «Արցախյան պատերազմը 1991-1994թթ.» թեմայի դասավանդումը դպրոցում

Ուսուցիչ՝ Մարտիրոս Գրիգորյան

Վերապատրաստող, մենթոր՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
«ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ……...…….5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
«ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ……...…….13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Աշխատանքում ուսումնասիրվում է «Արցախյան պատերազմը 1991-1994թթ.» թեմայի դասավանդումը և դասավանդման մեթոդները: Արցախյան վերջին պատերազմը ամենայն սրությամբ մեր առջեւ դրեց այս շուրջ 30-ամյա ՀՀ անկախության վերաիմաստավորման, թույլ տված սխալների ու բացթողումների վերհանման, ինչպես նաեւ ճշգրիտ լուծումներ առաջարկելու և առաջնահերթ անելիքները հստակեցնելու անհրաժեշտությունը: Աշխատանքի շրջանակներում խոսելու ենք ինչպես և ինչ մեթոդներով է հնարավոր պարզել, թե ինչպիսի մոտեցում ունեն այժմյան դպրոցի աշակերտները Արցախյան պատերազմի վերաբերյալ: Աշխատանքի շրջանակներում խոսվում է նաև թեմային համապատասխան նյութերի մասին, որոնց պետք է ուսուցիչը տիրապետի: Աշխատանքում ներկայացվում են այն հնարները և մեթոդները, որոնք կօգնեն ուսուցչին առավել պատկերավոր բացատրել թեման և տալ հիմքային գիտելիքներ և այս ամենը կատարել ոչ ուսուցչակենտրոն այլ աշակերտակենտրոն սկզբունքով:

Աշխատանքի նպատակն է բացահայտել «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման

- առանձնահատկությունները
- նշանակությունը
- հետևանքները

Վերը նշված նպատակներից բխող **խնդիրներն են՝**

- Բացահայտել ի՞նչ է դասը և ինչպե՞ս է հնարավոր լավագույնս կազմապերպել այն:
- Բացահայտել թեմայի ուսումնասիրության կարևորությունը մեր օրերում:
- Փորձել առանձնացնել այն նյութերը, որոնք անհրաժեշտ են ուսուցչին ավագ դպրոցականների հետ աշխատելու համար:
- Խոսել քարտեզների դերի մասին թեմայի ուսումնասիտության շրջանակներում:
- Փորձել առանձնացնել այն մեթոդները, որոնք լավագույնս կհամապատասխանեն թեմայի ուսումնասիրությանը հիմնական և ավագ դպրոցի աշակերտների հետ աշխատելիս, նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

Թեմայի արդիականությունը: Այս թեման մեր օրերում ամենաշատ քննարկվող հարցերից է, և թեման գիտենալը շատ կարևոր է, քանի որ ստեղծված պայմաններում նոր որակի և բովանդակության Հայաստանի Հանրապետության հրատապ կայացումը դարձել է անվիճարկելի հրամայական և դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղել, ինչի մասին շատ է խոսվում, սակայն դրանց հստակ անդրադարձ գրեթե չի կատարվում: Թեպետ Արցախյան ազատագրական առաջին պատերազմից անցել է 32 տարի, սակայն այն դեռևս արդիական է, քանի որ պատերազմը

դեռ ավարտված չէ և աշակերտները գիտենալով պատերազմի ծավալման և դրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների մասին կկարողանան ճիշտ կողմնորոշվել և վերլուծություններ կատարել ներկայումս տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Ծանոթանալով Արցախյան պատերազմներին մասնակցած քաջ մարտիկների կատարած սխրագործություններին կրտսեր սերնդի մոտ կձևավորվի հայրենասիրության, ազգասիրության, արդարության և ազատության վեհ գաղափարներ: Թեմայի ուսուցման շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ 2016թ. Քառօրյա պատերազմի օրերին տեղի ունեցած պատմական կարևոր իրադարձություններին, ինչպես նաև 2020 թվականի 44-օրյա պատերազմին: Չնայած այն հանգամանքին, որ վերջինիս մասին դեռևս չկա դասագրքերում, սակայն ներկայիս դպրոցականներն ականատես և վերապրողներն են այդ իրադարձությունների և հետևանքների, ուստի կարելի է նաև համեմատականներ անցկացնել և փորձել աշակերտների հետ միասին գտնել ստեղծված իրավիճակի պատճառահետևանքային կապը, փորձել գտնել ստեղծված իրավիճակը հաղթահարող ուղիներ, դրանով իսկ զարգացնելով աշակերտների մոտ քննադատական և վերլուծական մտածողություն: Պայմանավորված այս և շատ այլ հանգամանքներով մեր օրերում թեման չի կորցնում իր արդիականությունը:

Գրականության տեսություն: Օգտագործել ենք մեթոդական ձեռնարկներ, գրքեր, դասագրքեր, հոդվածներ ինչպես նաև թեմայի վերաբերյալ համացանցային աղբյուրներ: Թեմայի վերաբերյալ աշխատություններ են հրատարակել Է. Մինասյան[1], Հ. Պապոյան[2], Հ. Ղևոնդյան[3]:

Հետազոտության մեթոդներ: Օգտագործել ենք պատմահետազոտական, պատմա-վերլուծական, համադրման, հակադրման, պատմահամեմատական մեթոդներ:

Աշխատանքի առարկան և օբյեկտը: Աշխատանքի առարկան «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդումն է ժամանակակից հանրակրթական և ավագ դպրոցներում, իսկ օբյեկտը այն մեթոդների համախումբն է, որոնց միջոցով կազմակերպվում է այս թեմայի դասավանդումը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Առաջին գլուխը վերնագրված է «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման ժամանակակից առանձնահատկությունները և մեթոդները», որում խոսվում է թեմայի ժամանակակից առանձնահատկությունների, թեմայի կարևորության և թեմայի դասավանդմանը համապատասխան մեթոդների մասին: Երկրորդ գլուխը վերնագրված է «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման ընթացքը», որում խոսվում է հիմնական և ավագ դպրոցներում դասավանդման ընթացքի, թեմայի դասավանդմանը հատկացված

[1] Մինասյան Է., Արցախյան շարժման պատմության ուսումնասիրության արդի վիճակն ու խնդիրները, Եր., 2007:
[2] Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր., 2013:
[3] Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր., 2001:

ժամաքանակի, մեթոդների կիրառման արդյունավետության, աշակերտների տարիքին դասագրքի նյութի համապատասխանության մասին: Աշխատանքը կազմված է 19 մեքենագիր էջից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այսօրվա դպրոցում «Արցախյան պատերազմը» թեման դասավանդելիս կարևոր է հաշվի առնել Արցախյան հարցի կարևորությունը մեր օրերում: Այն թե ինչպես են մեր օրերում աշակերտները մոտենում այս հարցին: Կարևոր են և՛ ուսուցչի կողմից դասավանդման ընթացքում ցուցաբերվող մոտեցումը, և՛ կիրառվող մեթոդները: Մեր այս աշխատանքում առաջարկում ենք «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդներ, և քննարկում ենք թեմայի ժամանակակից առանձնահատկությունները:

Թեմայի ժամանակակից առանձնահատկությունները պետք է կազմեն վերջին շրջանում Արցախյան հարցի հետ կապված ողջ փոփոխությունները: Այսինքն ինչպիսի փոփոխություններ են եղել, որոնք փոխել են պատկերացումները նախորդ շրջանի և այս շրջանի աշակերտների մոտ: Իսկ վերջին շրջանում Արցախյան հարցի հետ կապված փոփոխություններ եղան, որոնք կարծում եմ փոխել են Արցախի հետ ունեցած աշակերտների պատկերացումները:

Թեմայի դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է իր հարցերի և մեթոդների միջոցով պարզի, թե ինչպես են աշակերտները գնահատում «Արցախյան պատերազմը» արդյոք արցախյան հերոսների օրինակով հայրենասիրություն է դաստիարակվել նրանց մոտ:

Կարծում եմ «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման համար շատ կարևոր է դասի մեջ ընդգրկել թեմային առնչվող բոլոր հնարավոր սկզբնաղբյուրները, դրանք կարող են լինել թերթեր (տվյալ շրջանի), «Արցախյան պատերազմին» նվիրված գրքեր, «Արցախյան հերոսներին» նվիրված գրքեր, հոդվածներ, նաև տեսանյութերի ընդգրկումն է ցանկալի:

Կարևոր է ուսուցչի կողմից նյութի պարզ բացատրումը: Ուսուցչի խոսքը պետք է գրքային նյութից դուրս տարբեր աղբյուրներից ինֆորմացիա ընդգրկի: Արցախյան հիմնախնդրի ուսումնադիրության վերաբերյալ եղած գրականությունը, հետազոտությունները կարելի է բաժանել մի քանի խմբի ըստ Է. Մինասյանի.

I. Արցախյան շարժման վերաբերյալ եղած ուսումնասիրություններ:

II. Ղարաբաղա-ադրբեջանական 1991-1994թթ. պատերազմի ռազմական գործողությունների վերաբերյալ հետազոտություններ:

III. Արցախյան հարցի միջազգայնացման և միջազգային հարաբերությունների ոլորտում դրա քննարկումների մասին եղած փաստաթղթեր և ուսումնասիրություններ:

IV. Արցախյան անկախ պատության հռչակման, պետականության կայացման նրա ներքին և արտաքին քաղաքականության վերլուծության վերաբերյալ եղած ուսումնասիրություններ[4]:

Առաջին խմբի վերաբերյալ կան Ղարաբաղյան հիմնախնդրին նվիրված բազմաթիվ աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, գրքեր, հուշագրություններ, վիճակագրական և փաստագրական ժողովածուներ, օրագրություններ, կինովավերագրեր, գրիք-հուշամատյաններ, տարեգրություններ, որոնք կարևոր դեր են խաղալու եզրակացություններ անելու համար:

Շարժման հենց սկզբից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տպագրվել են փաստաթղթեր և վավերագրեր (օինակ՝ «Ղարաբաղյան հարց» Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յու.), որոնցում շոշափված են արցախյան հիմնախնդրին առնչվող բազմաթիվ հարցեր: Այս ժողովածուները ժամանակին էական դեր են կատարել Արցախ-Ղարաբաղի հիմնախնդիրը ճիշտ հասկանալու գործում, զերծ չեն մի շարք թերություններից: Նաև պետք է նշել, որ այս ժողովածուներից դուրս են մնացել Արցախի հիմնախնդրին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր[5]:

Երկրորդ մասի 1991-1994թթ. գրականությունը ընդգրկում է ազատամարտի ռազմական գործողությունները, պաշտպանության բանակի կազմավորումը և անցած ուղին, պատերազմի առանձին դրվագները, դրանց վերլուծությունը: Օրինակ՝ Ս. Հասրաթյան «Գոյամարտը (ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց)», «Ղարաբաղյան պատերազմ», Ռ. Պետրոսյան «Արցախի պաշտպանության դիրքերում»[6]:

Երրորդ խումբ գրականությունը ավելի սակավ է: Արցախյան հարցի միջազգային քննարկումները ավելի շատ ներկայացված են ՀՀ Արտաքին գործերի նախարարության հաշվետվություններում և ԵԱՀԿ և մյուս միջազգային ատյաններում ու մամուլում[7]:

Չորրորդ մասի՝ պետականության կայացման, նրա ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ նույնպես գրականությունը սակավ է, չնայած գրվում են նոր գրքեր, ուսումնասիրվում են հոդվածներ, բայց մի ամբողջական աշխատություն այս ուղղությամբ դեռևս չկա[8]:

Թեման ուսուցչի կողմից աշակերտներին բացատրվելուց հետո նպատակահարմար է թեմայի քննարկումը ստատիկ զույգերով: Զույգերով քննարկումը նոր դասի բացատրվելուց հետո մեր կարծիքով հետաքրքիր է, քանի որ կարծիքների փոխանակումը օգնում է նոր լսած նյութի ամրապնդմանը: Յուրաքանչյուր զույգի ուսուցիչը քննարկման համար տալիս է առանցքային հարցեր, և հետո լսում իր աշակերտներին: Այսպիսով փորձում հասկանալ, թե այժմյան դպրոցում ինչպիսի մոտեցում ունեն աշակերտները այս թեմային:

---

[4] Մինասյան Է., նշվ. հոդվ., էջ 160:
[5] Նույն տեղում, էջ 161:
[6] Նույն տեղում, էջ 166:
[7] Նույն տեղում, էջ 170:
[8] Նույն տեղում, էջ 171:

Կարծում եմ թեմայի լավ յուրացման համար իդեալական են ինքնուրույն աշխատանքները: Դրանք կարող են լինել թեմայի վերաբերյալ ռեֆերատներ, պատերազմի հերոսների վերաբերյալ զեկույցները, աշակերտների պատրաստած սլայդ-ցուցադրություններ նվիրված պատերազմի հերոսներին: Ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են տալիս աշակերտներին յուրովի մոտենալ այս թեմային: Առանձնացնել իրենց հերոսական կերպարը, խոսել հայրենիք արժեքի և նրա պահպանման մասին:

Քննարկում կլոր սեղանի շուրջ: Ավագ դպրոցի աշակերտներին անշուշտ հետաքրքիր կլինի գրքային նյութից դուրս այլ աղբյուրներից ինֆորմացվելը, ստացված նոր նյութի վերաբերյալ քննարկումները: Առաջարկում ենք կլոր սեղանի շուրջ քննարկում կազմակերպել «Իսլամական խաղաքարտ Ղարաբաղյան հակամարտությունում» թեմայով: Աշակերտների մոտ խոսել, թե ինչպես 1990-ական թվականներից ի վեր Ադրբեջանը միջազգային այդ թվում՝ իսլամական շրջանակներում ձեռնամուխ եղավ ակտիվ քարոզչության, ձգտելով Ղարաբաղյան հարցը լուծել հօգուտ Ադրբեջանի: Ի թիվս այլ կռվանների՝ իսլամական համերաշխության գաղափարը կարող էր լավագույնս օգտագործվել իսլամական պետությունների աջակցությունը ձեռք բերելու համար: Ադրբեջանը անկախություն ձեռք բերելուց հետո ձգտում էր ընդգծել իր պատկանելիությունը իսլամական աշխարհին, բնավ առանց Թուրքիայի աջակցության Ադրբեջանը հաջողություն չէր ունենա: 1992 թվականից ի վեր իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ), Հայաստանին սկսեց դատապարտել իբրև «ագրեսոր», Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող և Ադրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող մի երկիր[9]: Կարծում ենք, որ այս թեմայի շրջանակներում կլինի հերաքրքիր քննարկում ավագ դպրոցի աշակերտների հետ, թե ինչպիսի՞ ազդեցություն կարող էր ունենալ իսլամական միջամտությունը այս հարցին, կքննարկվի նաև Թուրքիայի միջամտությունը Ղարաբաղյան հարցին և մշտական բացասական դերն այս հարցում:

Մինչ բուն թեման բացատրելը ցանկալի կլինի, որ ուսուցչի կողմից հետ հայացք կատարվի՝ համառոտ խոսի Արցախի պատմության մասին: Հիշեցնի իր աշակերտներին, թե ինչպիսի շրջափուլեր է անցել Արցախը, և այս ամենը փորձելով չշեղվել թեմայից: Ավագ դպրոցի աշակերտների մոտ հետաքրքիր դասի կազմակերպման և անցկացման համար խոսի Ադրբեջանի խտրական վերաբերմունքի մասին Հայրենական մեծ պատերազմի տարիներին, թե ինչպես են արցախցիները մեկ մարդու նման ոտքի ելել պաշտպանելու հայրենի հողը: Նաև բացատրի այն, որ եթե պատերազմում հաղթեր Գերմանիան, ապա նրա դաշնակից Թուրքիան զորք կմտցներ Հայաստան և Արցախ, կկազմակեպեր սարսափելի կոտորածներ[10]: Չնայած պատերազմի տարիներին

[9]Փաշայան Ա., Իսլամական խաղաքարտ Ղարաբաղյան հակամարտությունում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=530&fbclid=IwAR1jRDTMrod0p2F0Is6A4Jc5DoRtzRrVcsNFCK7wlyBZrCDvaZqnSfYFMzU

[10] Գրիգորյան Հ., Ադրբեջանի կողմից Հայրենական մեծ պատերազմի տարիներին Արցախում իրականացված խտրականության քաղաքականությունը, Եր., 2005, էջ 80:

Թուրքիան զորք չմտցրեց Հայաստան և Արցախ, բայց Ադրբեջանը օգտվեց պատերազմի ընձեռած հնարավորությունից և ռազմաճակատ ուղարկեց մի քանի անգամ ավելի շատ արցախցիներ՝ ԼՂԻՄ-ի հայ բնակչության 1/3-ը՝45,000 մարդ[11]: Նման տիպի ինֆորմացիա աշակերտներին տալուց հետո հետաքրքիր կլիներ անցկացնել թեմայի այլընտրանքային մոտեցում՝ լսել նրանց կարծիքները.

1/ Ի՞նչ եք դուք կարծում արդյոք արցախցիները հնարավորություն ունեին ընդվզելու նման խտրական վերաբերմունքից,

2/ Պատկերացրեք մի պահ, որ Հայրենական մեծ պատերազմում հաղթել է Գերմանիան, ըստ ձեզ ինչպիսի՞ քաղաքականություն պետք է վարի Հայաստանը: Կարծում ենք հետաքրքիր կլինեն նաև նմանատիպ քննարկումները: Դասարանական քննարկումները կարող են ընդլայնել աշակերտի հասկացողությունը, ավելացնել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել աշակերտի հեռանկարները, ընդգծել հակառակ տեսակետները, ամրապնդել գիտելիքները, ուժեղացնել վստահությունը և աջակցել համայնքին ուսուցման մեջ: Կախված դասընթացի թեմայից և ձևաչափից՝ իմաստալից և գրավիչ քննարկումների հնարավորությունները տարբեր են: Դասարանական քննարկումների արդյունավետությունը ապահովվում են աշակերտներիի հետ քննարկվող հարցերը, ստացված տեղեկատվությունը այլ ձևով մեկնաբանելը, այնպիսի հարցերի օգտագործումը, որոնք զարգացնում են քննադատական մտածողությունը[12]:

Ավագ դպրոցի աշակերտների հետ քննարկման համար հետաքրքիր թեմա է 1988-1990թթ. Ղարաբաղյան հիմնահարցի մասին խոսելը և այն մասին, թե ինչպիսի պիտակավորում տրվեց ՋԼՄ-ների կողմից Հայաստանի հետ միավորվելու արցախահայերի պահանջին, խորհրդային մամուլում համատարած դատապարտումը, նաև այն որ արևմտյան մամուլը հարցի հետ կապված հավաքները ԽՍՀՄ-ում անհավանական երևույթ էր համարում[13]: Թեմայի քննարկման շրջանակներում հետաքրքիր կլինի լսել աշակերտների հետևյալ հարցի պատասխանները. ինչպե՞ս դուք կփորձեք բացատրել արցախահայերի պահանջը, խուսափելով ժամանակի քննադատություններից: Դասին, քննարկումների ժամանակ լսել աշակերտների այլընտրանքային պատասխանները կնպաստի երեխաների մոտ հարցի առավել ստույգ և ռեալ պատկերացմանը:

Գծագրական դասակարգիչներ: Գծագրական դասակարգիչները մտածողության ընթացքը ակնառու դարձնելու միջոցներ են: Դրանցից է T-աձև աղյուսակը: Այն գործածվում է միևնույն հասկացության կամ խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Այն պարզ է իր կառուցվածքով և կազմակերպական ձևով: T-աձև աղյուսակը կազմված է 2 բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության հակադիր կողմերը:

---

[11] Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտը, Եր., 1991, էջ 68:

[12] Դասարանական քննարկումների արդյունավետությունը, https://www.celt.iastate.edu/teaching-resources/classroom-practice/teaching-techniques-strategies/leading-classroom-discussion/

[13] Դեմոյան Հ., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, Եր., 2002, էջ 181:

Հարմար է կիրառել դասի տարբեր փուլերում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Т-աձև աղյուսակը կիրառելի է այն դասերի ժամանակ երբ անհրաժեշտ է կերպարներ վերլուծել, նրա օգնությամբ ուսուցիչը վերլուծում է դասի ուժեղ և թույլ և կամ դասի դրական ու բացասական կողմերը: Այնուհետև, ըստ այդմ, կատարում է եզրահանգումներ (նկ.1):



Նկար 1

Մ-աձև աղյուսակը գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով Т-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ , որը միևնույն հասկացության խնդրի վերաբերյալ 3 տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու միջոց է:Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Մ-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում[14] (նկ. 2): Այն դասերը որոնք հագեցած են թվական տվյալներով առավել հեշտ և հասանելի բացատրելու համար ուսուցիչը կարող է կազմել ժամանակագրական աղյուսակներ, ժամանակի ժապավեն[15] դասը բացատրելուց հետո աշակերտների մասնակցությամբ:



Նկար 2

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում: Համակարգիչները օգտագործվում են ոչ միայն նոր նյութը բացատրելու, այլև գիտելիքները թարմացնելու, այն համախմբելու և տարբեր առաջադրանքներ կատարելու համար: Դասին աշակերտների պատրաստած ցուցադրումները օգնում է հավելյալ նյութերի և դասի լավ յուրացմանը, քանի որ նյութերը փնտրելով, առանձնացնելով կարևորը աշակերտները ավելի լավ են ընկալում դասը:Հետախուզական քարտերը տեղեկատվության ընկալման, մշակման և անգիր գործընթացների գրաֆիկական արտահայտման մեթոդ են, ստեղծագործական առաջադրանքներ, հիշողության և մտածողության զարգացման գործիք: Հետախուզական քարտերի մեթոդը կարող է օգտագործվել դասի տարբեր տեսակների և ձևերի համար. նոր նյութի ուսումնասիրություն, նյութի ամրագրում, նյութի ընդհանրացում, հետազոտական աշխատանք, նախագծի նախապատրաստում, ներկայացում: Ժամանակակից աշխարհում տեղեկատվության մեծ հոսք ունենալով ուսուցման մեջ հետախուզական քարտերի

[14] Գծագրական դասակարգիչներ, Т-աձև աղյուսակ, , Մ-աձև աղյուսակ: https://forum.armedu.am/forum/%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF/%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-

[15] Պապոյան Հ., նշվ. աշխ., էջ 179:

օգտագործումը տալիս է դրական արդյունքներ, կառուցվածքներ և հիշվում հետագայում[16]: Դպրոցականների ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու,



Նկ.3 Նկ.4

ինչպես նաև ուսման և ուսուցման գործընթացներն առավել հետաքրքիր, զվարճալի և արդյունավետ դարձնելու համար(նկ. 3, նկ.4): Դիդակտիկ մեթոդ «Մաքուր տախտակ»: Մեթոդի էությունն այն է, որ գրատախտակի (կամ ինտերակտիվ տախտակի վրա) գրվում են որոշակի հիմնաբառեր, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տերմիններ և խնդրահարույց հարցեր: Դասընթացի ընթացքում աշակերտներին առաջարկվում է «մաքրել» տախտակը: Երբ հիմնաբառերը ամբողջությամբ վերլուծված են



Նկ.5

կամ համապարփակ պատասխաններ են տրվում, դրանք ջնջվում են: Կարծում եմ այս մեթոդը թեմայի շրջանակներում կիրառելը ևս հետաքրքիր կլինի, քանի որ թեման ինքնին բարդ է, և սովորելու ընթացքում շատ հարցեր են առաջանում, որպեսզի բոլոր հարցերին տրվեն համապարփակ պատասխաններ առանց բացթողումների կարելի է այս մեթոդը կիրառել[17]: Դասի իրադարձությունների հերթականությունը ճիշտ պատկերացնելու, դրանք չշփոթելու համար առաջարկում եմ հիշողության օղակներ մեթոդը: Այս աշխատանքը կատարում են աշակերտները դասի ժամանակագրական հաջորդականությունը լավ պատկերացնելու համար: Խճանկար կամ Ջիգսո: «Խճանկար կամ Ջիգսո» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորը ուսումնասիրում են ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրներ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին[18]: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը(նկ.5): Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդի առավելությունն այն է, որ նյութը բազմակողմանիորեն և խորը ուսումնասիրվում է, աշակերտը հանդես է գալիս և՛ սովորողի, և՛ սովորոցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու, ժամանակը ճիշտ և արդյունավետ է օգտագործվում, նյութը

[16] Հետախուզական քարտերը դասավանդման ընթացքում, https://infourok.ru/intellektkarta-metod-aktivnogo-obucheniya-na-urokah-istorii-i-obschestovznaniya-3782328.html

[17] «Մաքուր տախտակ» դիդակտիկ մեթոդ, https://infourok.ru/intellektkarta-metod-aktivnogo-obucheniya-na-urokah-istorii-i-obschestovznaniya-3782328.html

[18] Խճանկար կամ «Ջոգսո» մեթոդը դասավանդման ընթացքում, https://www.jigsaw.org/

ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում[19]:

«Սղոց»: Մասնակիցները բաժանվում են 4-6 հոգուց կազմված խմբերի: Ուսումնական նյութը բաժանվում է մասերի: Խմբի յուրաքանչյուր անդամ կատարում է աշխատանքի իր բաժինը: Այնուհետև մասնակիցները, որոնք ուսումնասիրում են միևնույն նյութը և գտնվում են տարբեր խմբերում, հանդիպում են և քննարկում իրենց յուրացրած ինֆորմացիան որպես փորձագետներ: Տեղի է ունենում, այսպես կոչված, փորձագետների հանդիպում:

Այնուհետև նրանք վերադառնում են իրենց խմբերը և սովորեցնում խմբի մյուս անդամներին այն նորը, որի մասին տեղեկացել են իրենք: Խմբի բոլոր անդամները իրենց հերթին տեղեկություններ են հաղորդում առաջադրանքի իրենց բաժնի վերաբերյալ (ինչպես սղոցի ատամները): Քանի որ ուսումնական նյութը յուրացնելու միակ ճանապարհը իր խմբի անդամներին ուշադիր լսելն ու տետրում գրառումներ կատարելն է, ուսուցիչի կողմից այլևս կողմնակի ոչ մի ներգործության կարիք չկա: Մասնակիցները շահագրգռված են, որ իրենց ընկերները բարեխղճորեն կատարեն առաջադրանքները, որովհետև յուրաքանչյուրի պատրաստվածությունը ազդում է խմբի ընդհանուր գնահատականի վրա: Վերջնական փուլում ուսուցիչը կարող է խնդրել խմբի ցանկացած անդամի՝ պատասխանելու ցանկացած հարցի, որ վերաբերում է ուսումնասիրված, յուրացված նյութին[20]:

Քարտեզների դերը այս դասի ընթացքում շատ կարևոր է, քարտեզներն օգնում են աշակերտների մոտ ձևավորել տարածապատկերային մտածողություն և ամենաշատն է օգնում պատմական նյութի ընկալմանը, պատմական իրադարձությունների ընթացքի հասկացմանը: Պատմական քարտեզը ծառայում է պատմական իրադարձությունների բացատրմանը: Պետք է ընդգծել, որ քարտեզը անհրաժեշտ պիտույք է պատմության դասին: Պատմական քարտեզը պետք է համապատասխանի տվյալ դասին ուսումնասիրվող դարաշրջանին: Քարտեզի հետ աշխատելիս ուսուցիչը պետք է կանգնի քարտեզից աջ, դեմքով դեպի լույսը: Ցուցադրումը պետք է լինի դանդաղ և ճշգրիտ[21]: Քարտեզների հետ ծանոթանալուց հետո քարտեզագիտական նյութերի ամրապնդման համար հարմար են քարտեզագիտական խաղերի անցակցումը: Դրանցից կարելի է օգտագործել հետևյալը. քարտեզը բաժանվում է մասերի խճանկարի նման, երեխաները պետք է հավաքեն այն պատմելով յուրաքանչյուր հատվածին համապատասխան մարտական գործողությունների մասին:

Արտադասարանական-արտադպրոցական աշխատանքներ: Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունով էլ սխալ

[19] Նույն տեղում https://www.jigsaw.org/

[20]«Սղոց» մեթոդը դասավանդման ընթացքում, https://bstudy.net/643928/pedagogika/metod_jigsaw_pila

[21] Պապոյան Հ., նշվ. աշխ., էջ 137:

կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, սովորողների հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև արտադասարանական աշխատանքների գործընթացում: Քանի որ արտադասարա-նական աշխատանքի բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակությունը և փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը: Առաջավոր ուսուցիչների որոնող ստեղծագործ միտքը զբաղված է նրանով, թե ինչպես հաղթահարել սովորողների որոշ մասի անտարբերությունն ուսման նկատմամբ, ինչպես կազմակերպել ուսուցման գործընթացը, որպեսզի աշակերտը ոչ միայն ընկալի հաղորդվող գիտելիքները, այլև սովորի խորհել, դատել, վերլուծել եւ ինքնուրույն հետևություններ կատարել:Ուստի, ուսուցիչների ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի այդ նպատակի համար օգտագործվի սովորողների թե՛ ուսումնական և թե՛ արտադասարանական գործունեությունների միասնությունը: Արտադասարանական-արտդպրոցական[22] աշխատանքներ կազմակերպելիս ուսուցիչը աշակերտներին նախապատրասելու համար ինֆորմացնում է թեմայի մասին, նաև ցանկալի է որ աշակերտները ևս մասնակցեն ինֆորմացիայի որոնմանը հետաքրքրություն արթնացնելու համար: Մեր պարագայում թեմայի շրջանակներում ուսումնասիրել Արցախյան հերոսներին, քանի որ նպատակահարմար է կազմակերպել այցելություն-տեսակցություն հերոսներին:

Չպետք է մոռանալ նաև դասերին ամենաշատ կիրառելի մեթոդների՝ «Մտքերի տարափ» , «Վենի դիագրամ», «Քառաբաժան աղյուսակ»-ի մասին:

[22] Պապոյան Հ., նշվ. աշխ., էջ 279:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
«ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դասի ընթացքը 9-րդ դասարանում: Այս գլխում կխոսենք վերը թվարկված մեթոդների արդյունավետ կիրառման մասին պատմության դասավանդման ընթացքում, երեխաների տարիքին դասագրքի նյութի համապատասխանության մասին:

9-րդ դասարանում դասին ուսուցանվող նյութը ներկայացված է հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար Վ. Բարխուդարյան խմբագրությամբ կազմված գրքի: Թեմայի ուսումնասիրության համար նախատեսված է 2 ժամ[23]:

Դասը սկսում ենք մատյանը լրացնելով, միաժամանակ աշակերտները պատրաստվում են դասին: Դասի համար նախատեսված է խմբային աշխատանք, աշակերտները նստում են ըստ իրենց խմբերի, իսկ խմբերի բաժանումը կատարվել էր նախապես: Ներկա-բացակա անելուց հետո սկսում ենք դասը: Դասի խթանման փուլում աշակերտները կատարում են մտագրոհ, որի համար նախատեսված է 3-5 րոպե, և սա հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները, 9-րդ դասարանում աշակերտները ավելի արագ են կողմնորոշվում և արտահայտում իրենց մտքերը: Գրատախտակին գրվում է Արցախ բառը, աշակերտները հերթով գրելու են իրենց մտքերը երբ լսում են Արցախ անունը, առաջինը ինչ են պատկերացնում այդ էլ գրելու են:

Խամսայի մելիքություն

Արյան գնով պահած տարածք



Մեծ Հայքի նահանգ

Հայաստանի մի մասնիկ

Այս կերպ փորձում ենք կապել ուսումնասիրվող դասը անցած թեմաների հետ, քանի որ շատ կարևոր է աշակերտի մոտ զարգացնել պատմական մտածողությունը և պատմական պատկերացումը՝ այն որ պատմական յուրաքանչյուր դեպք մյուսի շարունակությունն է: Այս դասին և առհասարակ պատմության դասերին շատ կարևոր է ուսուցչի կողմից տրվող հարցերի դերը, ուսուցչի հարցերը պետք է նպաստեն աշակերտների մոտ պատմական մտածողության ձևավորմանը, պետք է ստիպեն հասկանալ, մտածել և վերլուծել[24]:Հարցերը տրվում են քարտերով յուրաքանչյուրին մեկ քարտ ընդ որում շերտավորված է այս աշխատանքը յուրաքանչյուրին ըստ իր ընդունակության: Սրա համար հատկացվում է 5 րոպե:

Դասի իմաստավորում փուլի համար խմբային աշխատանք ենք կատարելու ըստ «Սղոց» մեթոդի: Յուրաքանչյուր խումբ դասի մի հատված է ներկայացնելու և խմբերում ևս շերտավորված է աշխատանքը: Խմբերի աշխատանքը հեշտացնելու համար իմ կողմից տրվում են քարտեր որտեղ նշված է, «Ինչի՞ց սկսել», «Ինչի՞ մասին պատմել», «Ինչո՞վ

[23] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9 ուսուցչի ձեռնարկ, Եր., 2013, էջ 71:
[24] Ղևոնդյան Հ., նշվ. աշխ., էջ 56:

ավարտել նյութը», « Ի՞նչ եզրահանգումներ արեցի»: 5 րոպե տրվում է աշակերտներին պատրաստվելու համար, 15 րոպե պատասխանելու համար:

Կշռադատում փուլում, որի համար նախատեսված է 15 րոպե ընդհանրացնում ենք դասը քառաբաժան աղյուսակի միջոցով, գնահատում խմբերին և տալիս նոր հանձնարարություններ:

Եթե խոսենք դասագրքի մասին, ապա պետք է ասել որ համեմատած նախորդ տարիներին բավական բեռնաթափված է գրքի նյութը, բայց ինքնուրույն սովորելու համար փոքր-ինչ դժվար կլինի աշակերտներն, այդ պատճառով նպատակահարմար եմ գտել խմբային աշխատանքների անցկացումը:

Դասի ընթացքը 12-րդ դասարանում: 12-րդ դասարանում դասին ուսուցանվող նյութը ներկայացված է ավագ դպրոցի 12-րդ դասարանի համար Ա. Մելքոնյանի, Ա. Սիմոնյանի, Ա. Նազարյանի խմբագրությամբ կազմված դասագրքի: Թեմայի ուսումնասիրության համար նախատեսված է 2 դասաժամ[25]:

Դասը սկսում եմ մատյանը լրացնելով, ներկա-բացակա անելուց հետո անցնում եմ դասին, այս ընթացքում աշակերտները պատրաստվում են դասին: Թեման նախապես հանձնարարված էր ինքնուրույն ընթերցել, հիմնվելով դպրոցական կրթության եռաստիճան համակարգին, որի հիմքը հարստացման սկզբունքն է, «Պատմություն» առարկան ուսումնասիրվում է 4 տարի ընդմիջումով, ավելի խորացված, սա էլ թույլ է տալիս, որ ավագ դպրոցականները իրադարձությունները ավելի լավ յուրացնեն: Դասի խթանման փուլում նախատեսվում է դիտել տեսանյութեր. «Ղարաբաղա-ադրբեջա-նական հակամարտությունը և թուրքական գործոնը»[26], «Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտություն. այստեղ Հայաստանը չի շեշտվում»[27]: Այս փուլի համար նախա-տեսվում է 5-10 րոպե: Դասի սկզբից մինչև վերջ կիրառվելու է «Մաքուր գրատախտակ մեթոդը», ակնկալվում է, որ դասից անհասկանալի հարցերը պատասխանները կհնչեն քննարկման ընթացքում: Դասի իմաստավորում փուլում նախատեսված է լսածի և դասի նյութի վերաբերյալ քննարկում, դասարանը բաժանվում է 3 խմբերի՝ կողմ, դեմ, չեզոք: Տեսանյութերում խոսվում է Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության ոլորտում Հայաստանի դերի մասին: Նաև քննարկելու ենք պատերազմի ընթացքը, և այն թե ինչպե՞ս կվարվեին կողմերից յուրաքանչյուրը պատերազմին ըստ իրենց եղած սխալները չկրկնելու համար: Դասի այս փուլում ակնկալում եմ լսել աշակերտներից գրագետ, նյութին համապատասխան և մտածված պատասխաններ իմ հարցերին: Աշակերտները պատրաստելու են հարցեր միմյանց համար ևս: Լավագույն հարցերը և պատասխանները հնչեցնող աշակերտները կգնահատվեն առավելագուն 9 և 10 միավոր: Դասի այս փուլի համար նախատեսված է 15-20րոպե: Դասի կշռադատում փուլում կատարում ենք

[25] Ա.Սարգսյան, Ա. Մալոյան, Հայոց պատմություն 10-12: Հումանիտար հոսք: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Եր., 2009, էջ 77:

[26] Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը և թուրքական գործոնը, https://www.youtube.com/watch?v=A4Kkr0wM_CU

[27] Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտություն. այստեղ Հայաստանը չի շեշտվում, https://www.youtube.com/watch?v=r8wbh_MIgbE

ժամանակագրություն «Հիշողության օղակներ» մեթոդի կիրառմամբ: Սա կատարում ենք ամբողջ դասարանի մասնակցությամբ, ստուգում ենք գրատախտակին եղած հարցերը, եթե կան իմ կողմից տրվում են նաև այդ հարցերի պատասխանները: Թիմերը գնահատվում են իրենց պատասխանների համար: Այս փուլի համար նախատեսվում է 15 րոպե: Եթե խոսենք դասագրքի ծավալի մասին, և նյութի պարզության մասին, ապա պետք է ասել, որ հասկանալի և հասու է ավագ դպրոցի աշակերտներին, քանի որ այն ավագ դպրոցականները ուսումնասիրել են նաև 9-րդ դասարանում, կարևոր է 12-րդ դասարանում խորացնել թեմայի վերաբերյալ գիտելիքները:

Ստորև ներկայացված են դասերի նկարագրություններին համապատասխան դասի պլաններ.

«ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ»

Ուսուցչի անուն, ազգանուն՝ Մարտիրոս Գրիգորյան

Ամիս, ամսաթիվ՝

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 9-րդ

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Համազգային շարժման վերելքն ու զինված պայքարի սկիզբը

Դասի տիպը՝ խառը տիպի դաս (խմբային աշխատանք)

Կահավորանք՝ քարտեզներ, գրքեր, տետրեր, թեմայի վերաբերյալ պաստառներ,

Ցուցադրական նյութեր՝ ուղեցույց քարտեր, քարտեզ

Դասի ակադեմիական նպատակը՝ իմանալ Հայաստանում ծավալված համաժողովրդական շարժման կարևոր իրադարձությունները և դրանց հետևանքները:

Դասի դաստիարակչական նպատակը՝ դաստիարակել ՀՀ հայրենասեր քաղաքացի, սերմանել հայրենասիրություն, զարգացնել անկախ հայրենիքի կարևորության գաղափարը, քաջություն և արիություն դաստիարակել քաջ մարտիկների օրինակով:

Դասի ընթացքը՝ կազմակերպչական մաս. հաշվառում, մատենավարություն:

Խթանում (5-10ր), կիրառում ենք «Մտագրոհ» մեթոդը և քարտային աշխատանք: Իմաստավորում փուլում (20ր) կատարում ենք խմբային աշխատանք կիրառելով «Սղոց» մեթոդը:

Կշռադատում փուլում(15ր) ընդհանրացնում ենք դասը ըստ քառաբաժան աղյուսակի:

Միջառարկայական, ներառարկայական կապը Հայրենագիտություն, Ռազմա-գիտություն:

Անդրադարձ՝ դասի վերջին րոպեներին ամփոփում ենք դասը, տալիս նոր հանձնարարություններ:

Տնային հանձնարարություններ ՝ սովորել 118-123 էջերի դասը:

Ուսուցչի անուն, ազգանուն՝ Մարտիրոս Գրիգորյան

Ամիս, ամսաթիվ՝

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 12-րդ

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Անկախության հռչակումը: Արցախյան ազատագրական պատերազմը

Դասի տիպը՝ Խառը տիպի դաս (դաս քննարկում)

Կահավորանք՝ քարտեզներ, գրքեր, տետրեր, համակարգիչներ ,

Ցուցադրական նյութեր՝ ուղեցույց քարտեր, քարտեզ,

Դասի ակադեմիական նպատակը՝ սովորողներին հաղորդակից դարձնել ԼՂՀ անկախության հռչակման և պետականության ձևավորման գործընթացին: Իմանալ Արցախյան ազատագրական պատերազմի պատճառները, ընթացքը, փորձել գնահատել պատերազմի դերը, հասկանալ խաղաղ պայմաններում ապրելու նշանակությունը:

Դասի դաստիարակչական նպատակը՝ զարգացնել անկախ հայրենիքի կարևորության գաղափարը, դաստիարակել հայրենիքի ապագա խիզախ զինվոր, դաստիարակել ՀՀ հայրենասեր քաղաքացի:

Դասի ընթացքը՝ կազմակերպչական մաս. հաշվառում, մատենավարություն: Դասի սկզբից մինչև վերջ կիրառվելու է «Մաքուր գրատախտակ մեթոդը»:

Խթանում, (5-10ր) նախատեսված է տեսանյութերի դիտում. «Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը և թուրքական գործոնը», «Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտություն. այստեղ Հայաստանը չի շեշտվում» թեմաներով:

Դասի իմաստավորում փուլում (15-20ր) նախատեսված է լսածի և դասի նյութի վերաբերյալ քննարկում, դասարանը բաժանվում է 3 խմբերի՝ կողմ, դեմ, չեզոք:

Դասի կշռադատում փուլում(15ր) կատարում ենք ժամանակագրություն «Հիշողության օղակներ» մեթոդի կիրառմամբ: Խմբերը գնահատվում են իրենց պատասխանների համար:

Միջառարկայական, ներառարկայական կապը Հայրենագիտություն, Ռազմագիտություն:

Անդրադարձ՝ դասի վերջին րոպեներին ամփոփում եմ դասը, տալիս նոր հանձնարարություններ:

Տնային հանձնարարություններ ՝ սովորել 66-72 էջերի դասը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ի մի բերելով կատարված ուսումնասիրության արդյունքները կարող ենք եզրակացնել.

1. Դասավանդումը ուսուցչի և աշակերտների համագործակցությունն է, որի ճիշտ կազմակերպումը իրենից ենթադրում է դասին համապատասխան մեթոդների կիրառում:
2. «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդումը ժամանակակից դպրոցներում այն կարևոր թեմաներից է, որի իմացությունը կարծում ենք այսօր պարտադիր է, քանի որ դա այլևս համազգային խնդիր է, որից կախված է լինելու մեր պետականության կենսունակությունն ու հետագա ինքնիշխան գոյությունը, հայության ապագան:
3. Աշխատանքի շրջանակներում առանձնացվեց թեմային համապատասխան հավելյալ նյութերը, որոնք անհրաժեշտ են ուսուցչին ավագ դպրոցականների հետ աշխատելիս:
4. Ինչպես պատմության յուրաքանչյուր դասի «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման ընթացքում կարևոր և պարտադիր են համարվում թեմային համապատասխան քարտեզների օգտագործումը: Թեմայի ընթացքում քարտեզները օգնում են աշակերտներին ավելի լավ պատկերացնել մարտական գործողությունները, կատարման և շարժի ուղղությունները:
5. «Արցախյան պատերազմը» թեմայի դասավանդման համար լավագույն մեթոդներն են՝

   ա)խմբային աշխատանքները՝ «Սղոց», «Խճանկար», T-աձև, M-աձև աղյուսակների կիրառումը, արտադասարանական աշխատանքների իրականացումը, ցուցադրումների կազմակերպումը, հետախուզական քարտերի օգտագործումը հիմնական դպրոցի աշակերտների հետ աշխատելիս,

   բ)քննարկումների, բանավեճերի կազմակերպումը, ինքնուրույն աշխատանքների կատարումը ավագ դպրոցի աշակերտների հետ աշխատելիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳՐՔԵՐ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐ

1.Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտը, Եր., 1991, 175 էջ:
2.Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր., 2001,262 էջ:
3.Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր., 2013, 137 էջ:
4.Հայոց պատմություն 12-րդ դասարան, Հումանիտար հոսք, խմբագիր՝ Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., Եր., 2016, 129 էջ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9 ուսուցչի ձեռնարկ, Եր., 2013, 88 էջ:
2. Սարգսյան Ա., Ա. Մալոյան, Հայոց պատմություն 10-12:Հումանիտար հոսք:Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Եր., 2009, 96 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1.Գրիգորյան Հ., Ադրբեջանի կողմից Հայրենական մեծ պատերազմի տարիներին Արցախում իրականացված խտրականության քաղաքականությունը, Մերձավոր Արևելք II, Եր., 2005, 80-83 էջ:
2.Դեմոյան Հ., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակա-քարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, Մերձավոր Արևելք I, Եր., 2002, 181-191 էջ:
3.Մինասյան Է., Արցախյան շարժման պատմության ուսումնասիրության արդի վիճակն ու խնդիրները, Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը ներկան և ապագան, ԵՊՀ հրատ., Եր., 2007, 159-170 էջ:

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

1.Փաշայան Ա., Իսլամական խաղաքարտ Ղարաբաղյան հակամարտությունում,- http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=530&fbclid=IwAR1jRDTMrod0p2F0Is6A4Jc5DoRtzRrVcsNFCK7wlyBZrCDvaZqnSfYFMzU (առցանց հասանելի է 03.05.2020).
2. Դասարանական քննարկումների արդյունավետությունը,- https://www.celt.iastate.edu/teaching-resources/classroom-practice/teaching-techniques-strategies/leading-classroom-discussion/ (առցանց հասանելի է 03.05.2020).

3.Գծագրական դասակարգիչներ, Տ-աձև աղյուսակ,- https://forum.armedu.am/forum/%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6- (առցանց հասանելի է 03.05.2020).
4. Գծագրական դասակարգիչներ, Մ-աձև աղյուսակ,- https://dasvariblog.wordpress.com/2013/07/17/%D5%A4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A5%D5%A9%D5%A2%D5%B8%D6%82%D6%84%D5%B8%D5%BE___(առցանց հասանելի է 03.05.2020).
5.Հետախուզական քարտերը դասավանդման ընթացքում,- https://infourok.ru/intellektkarta-metod-aktivnogo-obucheniya-na-urokah-istorii-i-obschestovznaniya-3782328.html (առցանց հասանելի է 03.05.2020).
6. «Մաքուր տախտակ» դիդակտիկ մեթոդ,- https://infourok.ru/intellektkarta-metod-aktivnogo-obucheniya-na-urokah-istorii-i-obschestovznaniya-3782328.html (առցանց հասանելի է 03.05.2020).
7. Խճանկար կամ «Ջոգսո» մեթոդը դասավանդման ընթացքում,- https://www.jigsaw.org/ (առցանց հասանելի է 03.05.2020).
8. «Սղոց» մեթոդը դասավանդման ընթացքում,- https://bstudy.net/643928/pedagogika/metod_jigsaw_pila (առցանց հասանելի է 03.05.2020).
9. Ղարաբաղա-ադրբեջա-նական հակամարտությունը և թուրքական գործոնը,- https://www.youtube.com/watch?v=A4Kkr0wM_CU (առցանց հասանելի է 03.05.2020).
10.Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտություն. այստեղ Հայաստանը չի շեշտվում,- https://www.youtube.com/watch?v=r8wbh_MIgbE (առցանց հասանելի է 03.05.2020).